

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՍԱՏԱՆ ԴԵՄ

Ելեմուտքի նախարարության նախկին խորհրդականներին հանրի Շառլ յայտարարեց, թե Միացյալ Նահանգներու մեջ դատական հաւաքական հայց ներկայացուած է Լիբանանի կեդրոնական դրամատան եւ Լիբանանի դրամատանը միութեան շարք մը անդամներու նկատմամբ՝ աւանդատներուն հաշիւները յափշտակելու յանցանքով:

ՓՈՒՆԱԴԱՐՁ ՀՐԹԻՌԱՐՁԱԿՈՒՄ ՍԱՀՄԱՆԵՆ ՇԱՏ ՀԵՌՈՒ

Յրգալայի եւ Իսրայէլի միջեւ փոխադարձ հրթիռարձակումը երկ վերստին հատեց հարաւային գոտիի սահմանը եւ իսրայէլեան մերձակայ բնակավայրերն ու դիրքերը: Իսրայէլեան օդուժը ծանր հարուածներ ուղղեց Պեքայի

պէս հակադարձութիւն Այն Պաալ եւ Շահապիա գիւղերու շրջաններէն, որուն հետեւանքով մահացած էր Յրգալայի քանի մը անդամ: Իսկ իսրայէլեան բանակը խոստովանեցաւ, որ Յրգալայի նշեալ յարձակումին պատճառով վիրաւորուած է առնուազն 18 զինուոր, որոնցմէ վեցին վիճակը վտանգաւոր է:



հիւսիսային շրջանին, թիրախաւորելով մասնաւորաբար Պաալայք գաւառի Իհաթ շրջանը: Ըստ ապահովական տեղեկութիւններու, իսրայէլեան ռմբակոծութեան պատճառով կործանուած է զինամթերանց մը, իսկ մտակալ շէնքերու բնակիչ մը՝ վիրաւորուած: Լիբանանեան բանակը իսկոյն շրջապատեց թիրախաւորուած կառոյցը՝ արգիլելով քաղաքացիներուն մուտքը: Իսրայէլեան բանակը հաստատեց, թէ ռազմական օդանաւերը շարք մը յարձակումներ կատարած են Պեքայի մէջ գտնուող թիրախներու դէմ՝ որպէս հակադարձութիւն Արաբ ալ Արամշա շրջանին ուղղուած Յրգալայի հրթիռարձակումին: Յրգալայ նախապէս հաղորդագրութեամբ մը յայտարարած էր, որ դիպուկ հրթիռներով եւ անօդաչու թռչող սարքերով յարձակում գործած է իսրայէլեան հետախուզական 146րդ զօրախումբի զօրամասին վրայ՝ պաղեստինեան բնագրաւեալ Արաբ ալ Արամշա շրջանին մէջ, որ-

ՆՈՐ ՅԵՏԱԶԳՈՒՄ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ Խորհրդարանի դիւանի ժողով, որուն ընթացքին քննարկուեցաւ քաղաքապետական ու թաղա-



պետական ընտրութիւններուն թղթածրարը: Խորհրդարանի փոխնախագահ Էլիաս Պու Սաապ ժողովէն ետք լրագրողներուն յայտնեց, թէ արծարծած են լիազումար նիստին առաջարկուելիք օրինագիծերը՝ ներառեալ վերոյիշեալ ընտրութիւնները առաւելագոյնը մինչեւ 2025-ի 31 Մայիս յետագծելու առաջարկը, զոր ներկայացուցած է երեսփոխան ժիհատ Սամատ: Ըստ Պու Սաապի, շարք մը

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

ՌՈՒՄԵՐԸ ԱՐՅԱՆԵՆ ԴՈՒՐՄ

Ռուս խաղաղապահ ուժերը երկ սկսան դուրս գալ բըռնագրաւուած Արցախէն: Ռուսիոյ նախագահութեան բանաբեր Տմիթրի Փեքըով հաստատեց, թէ խաղաղապահները սկսած են տուն վերադառնալ: Իսկ Ռուսիոյ դաշնային խորհուրդը յայտարարեց, թէ Արցախի մէջ ռուս խաղաղապահներու առաքելութիւնը ամբողջութեամբ աւարտած է՝



Մոսկուայի եւ Պաքուի բարձրագոյն ղեկավարութեանց միացեալ որոշումով, յիշեցնելով, թէ Յայաստան այլեւս պահանջներ չունի Արցախի տարածքին հանդէպ: «Խաղաղապահներու Արցախէն հեռացումը Յայաստանի կողմէ Արցախը Ատրպէյճանի մաս ճանչնալու հետեւանք է», ըսաւ ռուս երեսփոխան Կրիկորի Գարասիւն: Նշեց, որ ատրպէյճանական լրատուամիջոցներ օր մը առաջ արդէն ցուցադրած էին ռուս խաղաղապահներու տեղաշարժը պատկերող տեսագրութիւններ:

Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարարութիւնը մեկնաբանեց Արցախէն ռուս խաղաղապահներու վաղաժամ հեռացումը, դիտել տալով, որ «այդ կը վկայէ, թէ ռուսերը յուսալի դաշնակից չեն»:

ՓԱՇԻՆԵԱՆ ԴԱՐՁԵԱԼ ՏԱՌՈՒՇԻ ՄԵՋ

Յայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան երկ այցելեց Յայաստանի հիւսիսարեւելեան սահմանային Տաւուշ



գաւառ, ուր սահմանամերձ Ոսկեպար գիւղին մէջ տեսակցեցաւ բնակիչներուն հետ եւ քննարկեց վերջին շրջանին տարածուած տեղեկութիւնները՝ Ոսկեպարի որոշ տարածքներ Ատրպէյճանին փոխանցելու մասին: Փաշինեան

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

ԻՍՐԱՅԵԼԻՆ ՃՆՇԵԼՈՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԵՐ

Իսրայէլեան թիրախներու դէմ Իրանի հրթիռային յարձակումն ու անոր հետեւանքները կը մնան միջազգային լուսարձակի տակ: Իսրայէլեան լրատւամիջոցներ երկ հաղորդեցին թէ վար-



չապետ Պենիամին Նեթանիահիւի կառավարութիւնը ենթակայ է միջազգային ծանր ճնշումի, որոնց նպատակն է կանխել Իրանի դէմ իսրայէլեան հաւանական յարձակում մը:

Լարուածութեան լոյսին տակ, Գերմանիոյ Lufthansa օդանաւային ընկերութիւնը որոշեց մինչեւ Ապրիլի ա-



ւարտը չեղարկել Պէյրութ եւ Իրան ուղղուող օդանաւային բոլոր թռիչքները՝ տարածաշրջանային ապահովական նկատառումներով: Ընկերութիւնը սակայն վերսկսաւ ուղեւորութիւններ կատարել դէպի Արաբի, Թեյ Ալի եւ Ամման:

Միացեալ Նահանգներու նախագահ Ժո Պայտըն զգուշացուց, որ եթէ Իրան սաստկացնէ Իսրայէլի դէմ յար-



ձակումները, այդ կրնայ Միացեալ Նահանգները մղել պատերազմի: «Իսրայէլը շրջանի մեր կարեւորագոյն գործընկերն է, հետեւաբար մենք ձեռնածալ պիտի չմտնենք, եթէ թուական աւտորիտար պաշտպանական հնարաւորու-

թիւնները», ըսաւ Պայտըն, միաժամանակ վստահեցնելով, թէ Իսրայէլեան բանակը ունի բաւարար հնարաւորութիւն՝ պաշտպանելու երկիրը: Իսկ արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, թէ կը շարունակէ իր դաշնակիցներուն հետ աշխատիլ՝ դիւանագիտական միջոցներով հակադարձելու Իրանին՝ իսրայէլեան թիրախներուն դէմ կատարած յարձակումին համար:

Գերմանիոյ վարչապետ Օլաֆ Շոլց մաղթեց, որ Իրանի յարձակումը չառաջնորդէ յաւելեալ լարուածութեան: Ան Իսրայէլին կոչ ուղղեց աւելի յայ-



նաձաւալ հարուած չտալ Իրանին՝ խուսափելու համար հակամարտութեան ընդարձակումէն:

Իսկ Իտալիոյ արտաքին գործերու նախարարը յայտարարեց, որ Եւրոմիութեան անդամ երկիրները կը մտադրեն Նոր պատժամիջոցներ սահմանել Իսրայէլի թշնամիները զինողներուն եւ Կարմիր ծովուն մէջ նաւերուն վրայ յարձակողներուն նկատմամբ:

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիպ Էրտողան շեշտեց, թէ Իսրայէլի վարչապետն ու կառավարութիւնը առանձին կը կրեն Միջին Արեւելքի մէջ սրած լարուածութեան պատասխանատուութիւնը:

Իսկ Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Յաքան Ֆիտան կարծիք յայտնեց, որ Իսրայէլի վարչապետը կը փորձէ տարածաշրջանը մղել աւելի լայնածաւալ հակամարտութեան: Ֆիտան Ուաշինկթընին կոչ ուղղեց միջամտել եւ ո՛չ ըսել Իսրայէլին:

ԲԱԹԱՐ՝ ԿՐԴՈՎԱԾ



Քաթարի վարչապետ եւ արտաքին գործերու նախարար Մոհամմատ պըն Ապտ ալ Ռահման Ալ Սանի յայտարարեց, որ Տոհա պիտի վերաթեւորէ Կազայի մէջ զինադադարի յանգելու ուղղութեամբ իր միջնորդական դերակատարութիւնը, որոհետեւ այդ «դերը չարաշահումի ենթարկուած է քաղաքական կարգ մը անձնաւորութիւններէ»:

ՈՒԵՐԱՆԻՈՅ ԱԶԱԿՅԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

Միացեալ Նահանգներու ներկայացուցիչներու պալատի նախագահ Մայք Դոնալդ յայտարարեց, թէ քննարկումի դրուած է Ուքրանիոյ եւ Իսրայէլին աջակցելու չորս օրինագիծ՝ դիմակա-

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

Հայ Քաղաքական Երեք Կուսակցութիւններ

109- Ամեակ

Հայոց Յեղաապանութեան

Քայլարշա

Ջահերթ

Երեքշաբթի 23

Ապրիլ 2024

Երեկոյեան ժամը 7:00-ին

Պորձ Համուէն Անթիլիասի Մայրավանք

ՆՈՐ ՀՆԱՐԱՊԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԺԱՐԱՆԱԿԱՆՔԻ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՍԵՆՏՐԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ՀԱՄԱՐ

Հայաստանի եւ Սենտրալ Արաքիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման պատմական քայլով այս շաբաթը կը նշանաւորուի երկու պետութիւններուն միջեւ ընդլայնուած տնտեսական, ընկերային եւ ռազմավարական համագործակցութեան հնարաւորութիւններու նոր դարաշրջանի մեկնարկով: Այս իրադարձութեան կարեւորութիւնն ու դրական ազդեցութիւնը կըրնայ հսկայական ըլլալ Հայաստանի համար: Սենտրալ



Արաքիան տարածաշրջանային ազդեցիկ տերութիւն է, որ զգալի ազդեցութիւն ունի արաբական եւ իսլամական աշխարհին մէջ: Աւելի յստակ՝ Հայաստանի Հանրապետութիւնը եւ Սենտրալ Արաքիոյ Թագաւորութիւնը կրնան արգասաբեր գործընկերներ դառնալ՝ կառուցելու այնպիսի ապագայ, ուր կը կարեւորուի մարդկային ներուժը եւ նոր թափ կը հաղորդուի պետութեան զարգացման:

Հայաստանի համար այդ յարաբերութիւններու զարգացումը անոր արտաքին քաղաքականութեան բազմազանեցման ցուցիչ է, եւ միաժամանակ աշակցութիւն այդ գործընթացին: Հայաստանը անցում կը կատարէ մէկ գործընկերոջմէ չափազանց կախուածութեան դարաշրջանէն դեպի այլ երկիրներու հետ աշխոյժ յարաբերութիւններու հաստատման: Յանձին Սենտրալ Արաքիոյ, Հայաստանը պիտի յարաբերի երկրի մը հետ, որ աջի կ'իյնայ գործընկերային ռազմավարութիւններու բարձր արհեստավարժութեամբ, արտասահմանի մէջ ներդրումներ կատարելու համար զգալի ֆինանսական ներուժով եւ այնպիսի համագործակցութիւններու հաստատմամբ, որ կ'օգնէ անոր զարգացնել նորարարութիւնները երկրին մէջ: Սա բարենպաստ պահ է ընդհանուր արժեքներու եւ հետաքրքրութիւններու ուրուագծման համար, որոնք այնուհետեւ պիտի օգնեն իրագործելի, փոխադասուելի արտակերպերու սահմանման: Հայաստանի համար կարեւոր պիտի ըլլայ հաւասարակշռութեան եւ փոխադարձութեան արձանագրումը՝ քարտեզագրելով Սենտրալ Արաքիոյ ներկայացուող առաջարկները: Միեւնոյն ժամանակ, Հայաստանը պետք է ռազմավարական առաջարկներ ներկայացնէ Սենտրալ Արաքիոյ՝ ի աշակցութիւն իր զարգացման:

Հայաստանի եւ Սենտրալ Արաքիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումը, ընդհանուր առմամբ, նշանակալի դրական իրադարձութիւն է եւ Յարաւային Կովկասի համար: Հաշուի առնելով Սենտրալ Արաքիոյ հսկայական միջոցները եւ անոր յաւակնութիւնները՝ որպէս աճող տերութիւն, Թագաւորութիւնը կրնայ կարեւոր դերակատարութիւն ունենալ տարածաշրջանի կայունացման եւ կայուն զարգացման գործին մէջ: Սենտրալ Արաքիան կրնայ միջնորդական դեր խաղալ՝ օգնելով կախիտելու ապագայ հակամարտութիւններու յառաջացումը: Սակայն նոյնիսկ անելի անուղղակի մօտեցման պարագային Սենտրալ Արաքիան կրնայ նպաստել կայունութեան հաստատման իր դիւանագիտական լծակներու եւ բոլոր կողմերու հետ փոխգործակցութեան, ինչպէս նաեւ Հայաստանի տնտեսական զարգացման առանցքային ոլորտներուն մէջ երկարաժամկետ ներդրումներ կատարելու միջոցով:

Սենտրալ Արաքիոյ արտաքին քաղաքականութիւնը կ'առանձնանայ իլոթոքիակութիւններով: Այն իրեն կը ներկայացնէ որպէս իրաւարար տնտեսական բարգաւաճման եւ կայուն խաղաղութեան հարցերու մէջ: Այն նաեւ իրեն կը դիրքաւորէ որպէս չեզոք երկիր, որ կրնար յարաբերութիւններ պահպանել Միացեալ Նահանգներու հետ եւ միեւնոյն ժամանակ ամուր յարաբերութիւններ ունենալ Ռուսաստանի հետ: Այն նոյնիսկ աշխատանքային դիւանագիտական յարաբերութիւններ հաստատած է նախկին տարածաշրջանային մրցակիցներու հետ, ինչպիսիք են՝ Թուրքիան եւ Իրանը: Չինաստանի միջնորդութեամբ Սենտրալ Արաքիան եւ Իրանը պայմանաւորուած են վերականգնել դիւանագիտական յարաբերութիւնները Իսրայէլի եւ Համաս-ի միջեւ պատերազմէն անմիջապէս առաջ: Սա Սենտրալ Արաքիոյ հնարաւորութիւն կու տայ իրաւահաւասար հիմունքներով համագործակցիլ Հարաւային Կովկասի բոլոր երկիրներուն հետ՝ չենթարկուելով հակամարտող կողմերու բեւեռացման:

Բազմակողմանիութիւնը ներկայիս Սենտրալ Արաքիոյ արտաքին քաղաքականութեան հիմնական ուղղութիւնն է: Բազմազանեցման օրակարգի շրջանակներուն մէջ Սենտրալ Արաքիոյ հետ համագործակցութեան հաստատումը, ինչպէս նաեւ լրացուցիչ գործընկերներու հետ յարաբերութիւնները, ինչպիսիք են Ֆրանսան, Եգիպտոսը, Յունաստանը եւ Կիպրոսը, կրնան ամրապնդել Հայաստանի ընդգրկուածութիւնը եւ համատեղ նախագիծերու յաջողութիւնը: Բացի անկէ, հաշուի առնելով անոր առաջատար դերը արաբական եւ իսլամական աշխարհին մէջ, ինչպէս նաեւ անդամակցութիւնը Պրիքս-ին, ՇՀԿ-ին, ԻՅԿ-ին եւ այլ բազմակողմ ձեռնարկներուն, Սենտրալ Արաքիոյ հետ Հայաստանի աճող յարաբերութիւնները դրական ազդակ պիտի փոխանցեն այլ պետութիւններուն՝ քաջալերելով զանոնք կառուցողական համագործակցութիւն ունենալու Հայաստանի հետ:

ՖՐԱՆՍԱՆ ԵՏ ԿԱՆՉԱԾ Ե ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԵՋ ԻՐ ԴԵՍՊԱՆԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Ֆրանսան որոշած է ետ կանչել Ատրպեյճանի մէջ իր դեսպանը խորհրդակցութիւններու համար՝ կապուած վերջին ամիսներուն Ատրպեյճանի կողմէ երկու երկիրներու յարաբերութիւններուն վնասող միակողմանի գործողութիւններու շարունակութեան հետ:



Այս մասին կը նշուի Ֆրանսայի Արտաքին գործերու նախարարութեան տարածած հաղորդագրութեան մէջ: «Հանրապետութեան նախագահը (խմբ. Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն) ընդունած է մեր դեսպանը այս թեմայով: Ան ափսոսանք յայտնած է Ատրպեյճանի գործողութիւններուն համար եւ ցանկութիւն յայտնած է, որ ատրպեյճանական կողմը պարզաբանէ իր մտադրութիւնները»,- կը նշուի հաղորդագրութեան մէջ:

Բացի անկէ նաեւ կը նշուի, որ Ֆրանսան կը վերահաստատէ իր աշակցութիւնը Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման՝ միաժամանակ յարգելով միջազգային իրաւունքը եւ երկու երկիրներու տարածքային ամբողջականութիւնը՝ ընդգծելով. «Այս կարգաւորումը օգուտ պիտի բերէ ինչպէս երկիրներուն, այնպէս ալ ամբողջ տարածաշրջանին»:

ՓԱՍԱՏԵՆԱՅԻ ԶԱՂԱՔԱՊԵՏԸ ԱՊՐԻԼ 24-Ը ՀՈՉԱԿԱԾ Ե ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Միացեալ Նահանգներու Գալիֆորնիա նահանգի Փաստենա քաղաքի քաղաքապետ Վիքթոր Մ. Կորտոս Ապրիլ 24-ը հռչակած է Հայոց ցեղասպանութեան յիշատակի օր:



«Որպէս համայնք՝ տեղին է, որ մենք միասին կանգնիք եւ միանաք մեր հայ եղբայրներուն ու քոյրերուն՝ փորձելով յիշել անոնց զոհուած նախնիները եւ ապահովել, որ այս սարսափելի արարքը չկրկնուի»,- ըսած է քաղաքապետ Կորտոս Զաղաքային խորհուրդի՝ Ապրիլ 15-ին կայացած նիստի ընթացքին:

Փաստենայի հայկական խմբակցութեան անդամ Պորոս Փաթաթեանը, իր հերթին, նշած է. «Եւ միև մեկ կը յիշեք անցեալը, եկեք նաեւ նուիրուեք անելի մեծ ապագայ կառուցելուն՝ որպէս մարդկութեան աննկուն ոգիի վկայութիւն»:

ՀՈՒՆՏԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՖԵՏԵՐԱՍԻՄՆԸ ՈՂԵԿՈՉՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՊԻՏԻ ՈՐՆԵՆԱՅ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 109-ՐԿ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Հոլանտահայ կազմակերպութիւններու ֆետերասիոնը Հայոց ցեղասպանութեան 109-րդ տարելիցին առնչութեամբ



ոգեկոչման միջոցառում պիտի ունենայ: Միջոցառումը պիտի կրէ «Արդարութիւն հաստատել՝ այն ժամանակ եւ այժմ» խորագիրը:

Միջոցառման ընթացքին ելոյթ պիտի ունենան Հոլանտայի մէջ Հայաստանի դեսպան Վիքթոր Պիյակովը, Հոլանտայի խորհրդարանի պատգամաւորներ Իսայ Զահրամանը, Տոն Սետերը, Նախկին պատգամաւոր Հարի Վան Մոմելը, «Ըշմարտութեան եւ արդարութեան կեդրոն»-ի ներկայացուցիչ Կասիա Աբգարեանը:

Ոգեկոչման միջոցառումը կազմակերպուած է Հոլանտայի մէջ Հայաստանի դեսպանութեան հովանիին ներքոյ:

«ԵԿԱԾ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ՎԵՐԱԿԱՆՁՆԵԼՈՒ ՀԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ»

ՖՐԱՆՍԱՅԻ ՎԻԼԻՈՐՊԱՆ ԶԱՂԱՔԻ ՆՈՐԱՆՏԻՐ ԶԱՂԱՔԱՊԵՏԸ ԱՅՅԵԼԱԾ Ե ՀԱՅԱՍՏԱՆ

Ֆրանսայի Վիլիորպան քաղաքի նորընտիր քաղաքապետ Սետրիք Վան Սթիվենտայելը այցելած է Հայաստան՝ նպատակ ունենալով հնարաւորինս նպաստել հայ-ֆրանսական բարեկամական յարաբերութիւններու ամրապնդման:

Վիլիորպանի քաղաքապետը ընդգծեց, որ նախորդ քաղաքապետը նոյնպէս գործուն եղած է, նախապէս եղած է պատգամաւոր, որ Ֆրանսայի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործին մէջ իր ներդրումը ունեցած է:

«Նախ քեզմ, թէ ինչու ես այստեղ եմ: Ես Վիլիորպան քաղաքի նորընտիր քաղաքապետն եմ: Առաջին անգամ ընտրուած եմ: Եկած եմ Հայաստան՝ վերականգնելու իմ ընկերութիւնը...»,- ըսաւ քաղաքապետը՝ ընդգծելով, որ Ֆրանսայի բոլոր քաղաքապետները պետք է այցելեն Հայաստան:



Սետրիք Վան Սթիվենտայելը, խօսելով Հայաստան կատարած այցի նպատակներուն մասին, նշեց, որ Վիլիորպանը եւ Արմովիլը քոյր քաղաքներ են 1992 թուականէն:

«Եկած եմ ինչպէս ստորագրելու՝ երկու քաղաքներուն միջեւ կապը անելի խորացնելու համար: Արմովիլի համայնքապետարանի անձնակազմին հետ նախօրէին ստորագրած ենք այդ ինչպէս գիրք»,- ըսաւ ան:

Ան յստակացուց, որ որոշում կայացուցած է այդ ինչպէս գիրք վերաստորագրել այս օրերուն, քանի որ հետեւած է Հայաստանի շուրջ տեղի ունեցող իրադարձութիւններուն եւ հասկցած է, որ Հայաստանը ունի օժանդակութեան կարիք, եւ որքան շատ ըլլան օժանդակողները, այնքան հեշտ պիտի ըլլայ լուծել ծագած խնդիրները:

«Ֆրանսայի մէջ տեղական ինքնակառավարման մարմինները շատ զգոյշ են քաղաքականութեան մասին խօսելու եւ որոշումներ կայացնելու, որպէսզի չմիջամտեն այլ հարցերուն եւ օժանդակեն Հայաստանին քաղաքային իշխանութիւններու մակարդակով»,- ըսաւ քաղաքապետը:

Սթիվենտայելը, խօսելով Հայաստան կատարած այցի միւս պատճառներուն մասին, յիշեցուցաւ «Վիլիորպան քաղաքը նաեւ լաւ կապերու մէջ եղած է Շուշի քաղաքին հետ, որուն հետ ես ունեիք ստորագրուած ինչպէս գիրք, եւ որ վերահաստատուած է 2020 թուականէն յետոյ՝ մէկ ուրիշ խումբի այցելութեամբ: Մեր պատուիրակութիւնը 2021 թուականին եկած էր Լեռնային Ղարաբաղ եւ Ստեփանակերտի մէջ հանդիպած էր Շուշիի քաղաքապետին»,- ըսաւ ան՝ մեծ կարեւորութիւն տալով իր այցի ընթացքին Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուած մարդոց հետ ունեցած հանդիպումներուն:

Ան նաեւ նշեց, որ Վիլիորպան քաղաքը միշտ աշխոյժ գործունէութիւն ծաւալած է՝ Լեռնային Ղարաբաղի հարցը բարձրացնելու առումով:

Խօսելով Լեռնային Ղարաբաղէն հայերու բռնի տեղահանութեան եւ Հայաստանի Հանրապետութեան կողմէ զանոնք ընդունելու մասին՝ քաղաքապետը, մասնաւորապէս, նշեց. «Մեզ ապշեցուցած է, որ Հայաստանը, ըլլալով փոքր երկիր, 5 օրուան մէջ կրցաւ տեղադրել ԼՂ-էն բռնի տեղահանուած հարիւր հազար հայեր: Մենք հասկցանք, որ Հայաստանի հայերը իրենց քոյրերու ու եղբայրները միայնակ չեն թողած»,- նշեց ան՝ յաւելելով, որ Ֆրանսան եւս մենակ չէ թողած բռնի տեղահանուածները եւ իր աշակցութիւնը տրամադրած է:

«Ֆրանսան օժանդակութեան հարցով 3 անգամ ՄԱԿ-ի մէջ հանդէս եկած է յայտարարութեամբ: Ֆրանսան ներկայիս եւս կը շարունակէ օգնութիւն տրամադրել ԼՂ-էն բռնի տեղահանուածներին՝ 30 միլիոն տոլար տրամադրելով Հայաստանին»,- յիշեցուց ան:

Ան նաեւ մատնանշեց, որ այս եւ ընդհանրապէս հայ-ֆրանսական յարաբերութիւններու առումներով ճիշդ կը համարէ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի վարած քաղաքականութիւնը:

Վիլիորպանի քաղաքապետը կարեւորեց Հայաստանի մէջ գործող ԵՄ դիտորդներուն գործունէութիւնը, ինչպէս նաեւ վերջերս կնքուած պաշտպանական համաձայնագրերը Հայաստանի եւ Ֆրանսայի միջեւ, որոնք աննախադէպ են:

Անդրադառնալով իր այցի շրջանակներուն մէջ ԼՂ-էն բռնի տեղահանուածներուն հետ ունեցած հանդիպումներուն՝ ան նշեց, որ Հայաստանի Հանրապետութիւնը կը փորձէ ամեն ինչ ընել, որպէսզի բռնի տեղահանուած հայերը մնան այստեղ եւ չհեռանան Հայաստանէն:

«Շատ արցախցիներ կապուած են իրենց հողին հետ եւ հանդիպումներու ընթացքին մեզմէ կը խնդրեն միջազգային ատենաններուն մէջ բարձրացնել իրենց՝ հայրենիք վերադառնալու իրաւունք ստանալու խնդրը»,- ընդգծեց Սթիվենտայելը՝ յաւելելով, որ պետք է ամեն ինչ ընել, որպէսզի անոնք մնան Հայաստանի մէջ, որպէսզի հետագային հեշտ ըլլայ ցփափաքողները Լեռնային Ղարաբաղ վերադարձնելը:

ԱՐՑԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՅ ՅՈՉԻՆ

Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայտն Կեանքի Յայտնաբերման օրհնությունը, Գուգարաց թեմի Առաջնորդ Գեորգ. Տ. Յովնան եպս. Յակոբյանի տնօրինությամբ, Յայ առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի «ՏՈՒՆ» Սոցիալ Կրթական կենտրոնի պատասխանատու Յոհաննիս Գրիգորյանի համագործակցությամբ, Սուրբ Էջմիածնի Կրոնասեր տիկնանց համախմբումի ատենապետուհի Անահիտ Տանձիկյան Լիբանանի մեջ պատրաստեց բռնի տեղահանումից արցախահայ 50 ընտանիքներու իրաքանչիւր անդամի համապատասխան տարիքով եւ չափերով նուէրներ եւ հագ ու կապ:



Արցախի ընտանիքի հիւրասիրությունը

Մտատրոպալ, ութ հազար արցախահայ կ'ապրի Լոռի մարզին մէջ: Ասոնցմէ 15 բազմադամ ընտանիք տեղաւորուած է Գուգարց եւ Շահումեան գիւղերուն մէջ եւ 35 բազմադամ ընտանիք՝ Վանաձորի մէջ, որ Յայաստանի երրորդ կարեւորագոյն քաղաքը կը համարուի:



Գուգարաց ընդհանուր առաջնորդարան

Գրիգորի քահանայ Տերմենճեանին՝ Գուգարաց թեմի Դսեղ համայնքի տարածաշրջանի հոգեւոր հովիւ, եւ Յոհաննիս Գրիգորյանին:

Տեր Ներսէս քահանային եւ Յոհաննիսի հետ այցելեցին բռնի տեղահանուած բազմադամ 15 ընտանիքի տուն Գուգարց եւ Շահումեան գիւղերուն մէջ, ոգեւորեցին, յոյս տուին, խորատեցին, ուրախացուցին եւ գոհացուցին զիրենք:



Գուգարցի մէջ

Չորեքշաբթի, 3 Ապրիլ 2024-ին, արժանապատիւ Տեր Վահան աւագ քահանայ Ազարեան, Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացիի հոգեւոր հովիւ, Յոհաննիս Գրիգորյան եւ Արեւիկ Եղիազարեան՝ ծրագրերու պատասխանատուին հետ հաւաքուեցանք Լոռի մարզի Վանաձոր մայրաքաղաքին Մայր եկեղեցու Սուրբ Գրիգոր Նարեկացի սրահին մէջ: Աւելի քան 30 ընտանիքի հայրեր ու մայրեր ներկայ էին: Տեր Վահանը եւ Սուրբ Էջմիածնի Կրոնասեր տիկնանց համախմբումի ատենապետուհին հաճելի զրոյցներով ոգեւորութիւն ներշնչեցին բռնի տեղահանուած բազմադամ ընտանիքներու, որոնց անդամները իրենց երախտագիտական զգացումները յայտնեցին այս հանդիպումին համար:

Այս այցելեցինք Վանաձորի կեդրոնէն հեռու ապրող այլ 5 ընտանիքներու, Տեր Վահանին ուղեկցութեամբ: Չանազան ընտանիքներու մէջ տատկիներ կ'ապրին, որոնց ցան ու վիշտը շատ ահռելի էր՝ ամուսինի, զաւակի եւ թոռան կորուստէն:

Լոռիի մարզի արցախահայութեան այցելութեան ընթացքին նոյնպէս իւրաքանչիւր անդամ ստացաւ անհատական նուէրներ տրամադրուած եւ պատրաստուած Լիբանանի համախմբումի վարչութեան անդամներու կողմէ, նաեւ իւրաքանչիւր ընտանիք ստացաւ կոկիկ գումար մը: Սոյն օժանդակութիւնը տրամադրեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու Ֆրեզնո քաղաքի «Գլաբա Մարկուսեան հիմնադրամի» տնօրէն Տոքթ. Վարուժ Ալթեպարմազեանը:

Արցախահայութիւնը իրաշք ժողովուրդ է: Պարտինք չմոռնալ զիրենք եւ օգտակար ըլլալ իրենց կեանքի բարեմասն:



Շահումեանի մէջ

Անոնք ունին իրաշալի յատկութիւններ՝ բարձր արժանապատուութիւն, իրենց մոյլ հոգեվիճակին մէջ անգամ կը մտածեն ուրիշին օգնել, շատ երախտագետ են, կը սիրեն անպայման հիւրասիրել իրենց մասնագիտութեամբ պատրաստուած քաղցրեղենով եւ այլ ուտելիքով:

Արցախահայութիւնը շնորհակալ է իրենց կատարուող օժանդակութեան համար, յատկապէս մանկավարժներ, որոնք արդէն աշխատանքի անցած են, իսկ հողագործներ որոնք հողին կ'ապուած աշխատանքի լծուած են:



Սուրբ Գրիգոր Նարեկացի Մայր Տաճար

Սակայն հայ զինուորը տակաւին կ'անկնկալէ, որ Յայաստանի կառավարող մարմինը լուծում մը գտնէ իրենց գոյութեան կանխապահումը բարւոք ապահովելու համար:

Չմոռնանք այս դժնդակ օրերուն Արցախէն բռնի տեղահանուած ընտանիքները եւ մեր առօրեայ հացէն ու ապրուստէն բաժին մը հանենք օգտակար դառնալով իրենց:

Սուրբ Էջմիածնի Կրոնասեր տիկնանց համախմբումը պիտի շարունակէ իր աջակցութիւնը յառաջիկային Յայաստանի տարբեր մարզերու մէջ ապրող արցախացիներուն: Մենք կը ձգտինք կատարելու այն ինչ որ բարին է ու օգտակար մեր սիրելի հայրենակիցներուն:

ԱՆԱԳԻՏ ՊՈՒՆՏՈՒԹԵԱՆ ՏԱՆՁԻԿԵԱՆ

«ԵԿԱՑ ԵՄ ԱՆՅԱՍՏԱՆ՝ ՎԵՐԱԿԱՆՔՆԵՆՈՒ ՀԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ»

(Շարունակուած Բ. Էջէն)

Անդրադառնալով անոր, թէ ո՞ր ոլորտներուն մէջ կրնայ զարգանալ Վիլիորպան եւ Արովեան քաղաքներուն միջեւ համագործակցութիւնը՝ քաղաքապետը նշեց, որ հիմնական ուղղութիւններն են կրթութիւնը, ֆրանսերէնի տարածումը, անձնակազմերու փոխանակման եւ անոնց որակաւորման հարցերը:

«Քիչ առաջ մենք ֆրանսական դպրոցի մը մէջ էինք եւ կը փորձէինք հասկանալ, թէ ինչպէ՞ս կրնանք մեր ծրագրերուն մէջ ներգրաւել նաեւ Արովեան քաղաքին մէջ ապաստան գտած շուրջ 6000 արցախացիները»,- ընդձեռնեց ան:

Եզրափակելով իր խօսքը՝ Ստեփան Վան Սթիվենտայնը կիսուեցաւ Յայաստան կատարած այցի տպաւորութիւններով. «Ես հիմա հասկցայ, թէ ինչու նախկին քաղաքապետները միմեանց հետ կը վիճին, որպէսզի այցելեն Յայաստան: Պէտք է զալ Յայաստան. դուք շատ սիրալիր ու բարեհամբոյր, սրտաբաց ժողովուրդ մըն էք, որուն հետ կ'ուզես ընկերութիւն ընել: Այս բաները եւ չեմ ըսեր ուղղակի հաճոյանալու համար եւ չեմ ըսեր պարզապէս շողորթելու համար, բայց այստեղ մարդիկ շատ սրտաբաց են»:

ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՍԷՆՏՐԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ՀԱՄԱՐ

(Շարունակուած Բ. Էջէն)

Սեւտական Արաքիոյ համար Յարաւային Կովկասը լայն Մերձաւոր Արեւելքի բաղկացուցիչ մասն է: Զանի որ Սեւտական Արաքիան կ'ամրապնդէ իր դիրքերը որպէս տարածաշրջանային կառուցողական դիրքորոշում ունեցող տերութիւն, անոր համար կարեւոր պիտի ըլլայ պահպանել իր ներկայութիւնը ու դիւանագիտական ժառանգութիւնը կառուցել Յարաւային Կովկասի երկիրներու հետ յարաբերութիւններուն մէջ:

Աւելին, իր հասարակութեան ներուժի լիարժեք իրացման ուղղուած ներքին զարգացման գործընթացին մէջ Սեւտական Արաքիան կրնայ բարեկամ գտնել ի դէմ Յայաստանի: Երկու ժողովուրդներուն միջեւ կայ մշակութային խոր կապուածութեան դարաւոր ժառանգութիւն: Յայ ներգաղթեալները, յատկապէս Սուրիայէ եւ Լիբանանէն, Սեւտական Արաքիոյ մէջ շատ լաւ համբաւ ունին որպէս մարդիկ, որոնք մասնակցած են ժամանակակից թագաւորութեան կառուցման: Մշակութային փոխանակումները, խառն ամուսնութիւնները եւ ընդհանուր պատմութեան բազմաթիւ ակնառու պահերը ստեղծած են դրական կապեր, որոնք կրնան շարք մը նախաձեռնութիւններու հիմք հանդիսանալ:

Ինչպէս երկրին ներքը, այնպէս ալ արտերկրի մէջ, Սեւտական Արաքիան մեծ ներդրումներ կը կատարէ հիմնարար նորարարութիւններու ոլորտին մէջ, որոնք կրնան խթանել տնտեսական աճը: Երկրին ներքը այս նպատակը իրագործելու համար Սեւտական Արաքիան կը փափաքի ներգրաւել տաղանդներ եւ մտաւոր դրամագլուխ, ինչ որ պիտի նպաստէ արագ աճին: Յայաստանը, չնայած իր առջեւ ծառայած դժուարութիւններուն, գտած է մշակած է լուծումներ, որոնք կրնան խթանել Սեւտական Արաքիոյ աճը առանցքային ոլորտներու մէջ՝ արհեստագիտութիւններէն մինչեւ մշակույթ:

Գործընկեր երկիրներու հետ Սեւտական Արաքիոյ փոխգործակցութեան առանցքային ուղղութիւնը տնտեսութեան ռազմավարական կարեւոր ոլորտներու մէջ երկառածամկէտ ներդրումներն են: Յայաստանը պէտք է լուրջ ուսումնասիրութիւններ կատարէ համատեղ ներդրումներու նպատակային ողջամիտ հնարաւորութիւններ ընտրելու համար: Սա յատկապէս կը վերաբերի գիւղատնտեսութեան, արհեստական բանականութեան, վերականգնողութեան միջոցներ եւ բարձր արհեստագիտութիւններու ոլորտներուն, որոնք մեծ հետաքրքրութիւն կը ներկայացնեն Սեւտական Արաքիոյ համար: Յաշուի առնելով Սեւտական Արաքիոյ՝ լայնածաւալ, երկարաժամկէտ ընդհանուր ներդրումներ տրամադրելու կարողութիւնը, երկրորդ նախագիծերը կրնան ներառել ներդրումներ ենթակառուցածքներուն եւ տնտեսական զարգացման մէջ, որոնք փոխակերպիչ ազդեցութիւն պիտի ունենան Յայաստանի վրայ:

Կառավարութեան ղեկավարութեամբ ընթացող ընկերակումներէն բացի, քաղաքացիական հասարակութեան նախաձեռնութիւնները կրնան մեծապէս նպաստել հանրային դիւանագիտութեան զարգացման եւ Յայաստանի ու Սեւտական Արաքիոյ առաջատար կազմակերպութիւններուն միջեւ ռազմավարական համագործակցութեան հաստատման: Յայաստանը կարեւոր հնարաւորութիւն ունի ներգրաւելու մասնաւոր հատուածի, ընկերային ձեռնարկատիրութեան, արհեստագիտութիւններու եւ ներդրումներու զարգացման, գիւղատնտեսութեան եւ այլ ոլորտներու լուսագոյն ներկայացուցիչները՝ Յայաստանի եւ Սեւտական Արաքիոյ միջեւ արդիւնաւետ եւ փոխշահաւետ նախաձեռնութիւններու ուսումնասիրման համար: Յամագործակցութեան այս ոլորտը կրնայ ներառել նաեւ Յայաստանի մէջ ակադեմիական հիմնարկներ, գիտական հարթակներ եւ գիտարուեստական հետազոտողներ, որոնք կրնան մասնակցիլ ներկայիս Սեւտական Արաքիոյ մէջ իրականացուող տարբեր գիտական նախաձեռնութիւններուն, որոնք կ'երկրորդանան եւ թագաւորութեան նորաստեղծ կեդրոններուն եւ համալսարաններուն մէջ: Չքաղաքացիները եւ առեւտրային յարաբերութիւնները ունին զարգացման հնարաւորութիւն, եւ Սեւտական Արաքիան կրնայ դառնալ գիւղատնտեսական ապրանքներու արտահանման հաւանական շուկայ:

Յայաստանի համար սա նաեւ հնարաւորութիւն է աշխուժացնելու իր սփիւռքը: Չնայած փոքրաթիւ ըլլալուն, հայկական սփիւռքը, յատկապէս արհեստագիտական ոլորտին մէջ, շատ աւելի մեծ կշիռ ունի իր ընդհանուր կապերու եւ ներկայացուածութեան շնորհիւ: Յայկական սփիւռքին մէջ առանցքային կապերը կրնան ներգրաւել գործարար եւ նորարարական ներուժ, որ Սեւտական Արաքիան կը փնտռէ սեփական աճի պատմութիւնը կերտելու համար:

Մշակութային ոլորտին մէջ Սեւտական Արաքիան խոշոր ներդրող է՝ զարգացնելով երաժշտական արուեստը եւ ստեղծելով ենթակառուցածքներ համերգներու եւ երաժշտական երկխօսութեան համար: Յաշուի առնելով Մերձաւոր Արեւելքի մէջ հայ համայնքին կողմէ մշակութային արժեքներու ստեղծման պատմութիւնը՝ Սեւտական Արաքիոյ համար այդ ժառանգութեան բնական շարունակութիւնն է հայ արուեստագետներու, կրթական հաստատութիւններու եւ ստեղծագործողներու ներգրաւումը մշակութային արժեքներու ստեղծման գործին մէջ: Այդ թոյլ պիտի տայ երկու պետութիւններուն հասնելու մշակութային դիւանագիտութեան կարեւոր նպատակներուն եւ պիտի ծառայէ մարդոց միջեւ կապերու ամրապնդման:

Յայաստանի եւ Սեւտական Արաքիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումը կրնայ դրական ուղղութեամբ փոխել Յարաւային Կովկասի զարգացման հետագիծը: Այս հնարաւորութիւնը այն պահին է, երբ Յայաստանն ու Սեւտական Արաքիան կրնան սորվիլ իրարմէ եւ աւելին իմանալ իրարու մասին: Երկու երկիրներն ալ պէտք է օգուտ քաղեն այս պահին եւ անկեղծօրէն ու առատաձեռնօրէն կիսուին իրարու հետ՝ համաձայնակցութեան եւ փոխադարձութեան վրայ հիմնուած գործընկերութիւն կառուցելու նպատակով:

ՓՈՒՆԱԴԱՐԱԿԱՌԲԵՐ ԱՊՐԱՀՈՒՐՈՒՄ ԵՆ

Ստորև յիշյալ շրջաններն դեպի Պորոճ Համուտ կը տեղափոխվեն **Ժամը 6:00-ին:**

- ՀՅԴ «Ազատամարտ» ակումբ, Էջմիշի:
- ՀՅԴ «Տիգրան Շամիր» ակումբ, Մար Մելիայե:
- Հայաշենի ժողովրդային տուն:
- «Ս. Գեորգ» եկեղեցու դիմաց, Համուտ:
- «Տիգրանի» ակումբ հայկի Պատարի:
- ՀԱՄ Պեյրոպ ակումբ:
- «Ս. Յարութի» եկեղեցու դիմաց, հայկի Պատարի:
- ՀՅԴ «Է. Ավետիսյան» ակումբ, Ֆանար:
- ՀՅԴ «Նուշի» ժողովրդային տուն, Ուստուտ:
- ՀՅԴ «Գ. Նուշի» ակումբ, Ջարա:
- Ուստուտի ՀԱՄ ակումբ:
- «Անի» կեդրոն, Կահր Մոթ:
- «Արարատ»-ՀԱՄ մարզաշահարկային համալիր, Մզհեր:
- Միսիբան շենքեր, Աթրիխա:
- Ժպլիկի Հայ կեդրոն:
- ՀՅԴ «Ս. Ջեյրան» կեդրոն, Այնճար:
- ՀԱՄ Աթրիխա ակումբ:
- «Մասիս» ակումբ Պորոճ Համուտ:

«Կերպարներ ապահովում է նոր շրջանները ներդրող»
Պորոճ Համուտ

Հայ Կաթողիկե Պատրիարքարան

ՅՈՒՆԱՏԱԿ ԱՊՐԻԼԵՆՆ ԵՎ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՄ

ՀՄԿՈՒՄ

Երեքշաբթի, 23 Ապրիլ 2024-ին, երեկոյան ժամը 8:00-ին
Հայ Կաթողիկե Պատրիարքարանի
Նահատակաց Յուզակոթողին շուրջ - Ժեթաուի:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Նախագահությամբ
Ն.Ա.Գ.Տ.Տ. ՈՒՅԱՅԵԼ ՊԵՏՐՈՍ Ի.Ա.
Կաթողիկոս Պատրիարքին Տանն Կիլիկիոյ Կաթողիկե Հայոց

Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2024-ին, երեկոյան ժամը 5:00-ին,
«Ս. Գրիգոր Լուսավորիչ» ճեմարանի բակին մէջ, Ժեթաուի:
Մասնակցութեամբ Հայ Կաթողիկե ժողովրդապետութիւններուն,
սիրութիւններուն եւ վարժարաններուն:

Կը բարոզէ
Գերապայծառ Գ. Գաբրիէլ Թ. Վ. Մուրատեան
Ընդհանուր Փոխանորդ Պեյրոպի Պատրիարքական Թեմին

Ս. Պատարագի ատարողն, հանդիսարար թափօղը կ'ուղղուի դեպի պատրիարքարանի բակը, ուր Նահատակաց Յուզակոթողին առջեւ պիտի կատարուի աղօթք:

Փոխարկամիջոցներ տրամադրուած պիտի ըլլան հետեւեալ կեդրոններուն մէջ կ.ճ. 4:00-ին,
- Ստրոպան Բարձրագոյն Վարժարան (Պորոճ Համուտ)
- Ս. Կաջ Հարպոյեան Բարձրագոյն Վարժարան (Ջարա)

Հայ ժողովուրդը հրախորած է
յարգանքի տուրքը մատուցանելու մեր բոլոր Նահատակներուն:

Ս.Գ.Հ.Կ. «Յ. Կուժունի» մասնաճիղ

Ապրիլեան Ոգեկոչում Հայոց Տեղասպանութեան 109-րդ տարեկիցին առթիւ:

Տեղի կ'ունենայ, Հինգշաբթի, 18 Ապրիլ 2024-ի երեկոյան, ժամը 8-ին,
Հ.Մ.Ս. Աթրիխայի ակումբի սրահին մէջ:

Օրուան բանախօս՝ **Շնկ. Նազարէք Ճերճեան**

Հրատէր

ՊՐՈՅՐ ՍԵՆԱԿԻ (1924-1971)

Ծննդեան 100-ամեակին
Նուիրուած գրական-գեղարուեստական երկերով

Գլխավոր քանադայացի
Դուկ. Սեակ Ղազարեան
(Գրականագետ, բանասէր, Պարոյր Սեակի անուան տուն-բազմաբարձր տնօրէն, Պարոյր Սեակի բոլոր)

Սանտոնի կատարողութեամբ հանդես կու գայ
Տիգրան Անի Սարաֆեան-Եղիշեան
(Սիւնիքահայ համրապարտ ասուկեր, յատուկ հրատարակող Էրզրումեան այս աղբյուր)

Սրտի խօսք
Տիգրան Սուսաննա Գաբրիէլեան
(Լուսին Տարաբանի եւ Սարգիս Պարոյրի անուան տուն-բազմաբարձր տնօրէն, Ս. Շեքարի անուան Էրեւանի պետական բժշկական համալսարանի փիլիսոփայական գիտութիւններու դոկտոր, փրոֆեսոր, ԵՄԵԱԿԻՍԻ-Ի փրոտէկայի անդամ, Հայաստանի հայաստանեան մասնաճիղի վարիչ)

Սեմուր
Յամիկ Յարութիեան
(Սուրբաբան, միջազգային մրցութեան դափնեկիր)

Պաշտօնի Ուսակցութեամբ
Փրոֆ. Սուսաննա Գաբրիէլեան

Երկու կ'ունենայ
Հայաստանի պետական Ազգային ակադեմիական երգչախումբը

Գեղարուեստական ղեկավար եւ գլխավոր խմբավար
Մայնարո Յովհաննէ Չեքիճեան
(ԽՄԳՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակակիր, դափնեկիր, Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի փրոֆեսոր, Հայաստանի ազգային երգչախումբի Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տան մէջ, Իսահակեան 1)

Տեղի կ'ունենայ երկուշաբթի, 22 Ապրիլ 2024-ին, երեկոյան ժամը 19:00-ին,
Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տան մէջ, Իսահակեան 1

Սրտի խօսքը կ'արտօնուի ժամը 18:30-էն սկսեալ:
Յայտագիրը կը սկսի ժամը 19:05-ին:

Կազմակերպիչ յանձնաժողովին հետ կարելի է կապ հաստատել. E-mail: dzaghig2004@yahoo.com
Դե. 098 685057 (Երեւան) - 03-685058 (Պեյրոպ)

ՄԻՏԵԼ ԱՎԱՅ Է

Կազմակերպութեամբ՝

ՍՈՒՐԵԿ ՊԱՏԱՐԱԳ

Նուիրուած Հայոց Տեղասպանութեան 109-ամեակին

Տեղի կ'ունենայ Երաթ, 20 Ապրիլ 2024-ին,
երեկոյան ժամը 7:30-ին, Ուստուտի Հ.Մ.Ս. ակումբին առջեւ:
Միևնույն ժամանակ պիտի կատարուի մոմերու բաշխում
չրջանի բոլոր հայ ընտանիքներուն տուները:

Հրատէր

Կազմակերպութեամբ՝

Ս.Գ.Հ.Կ. ՍԵԱԿԵ ԳԻԼ - ՓԵՐԵՄԵՋ - ՏԵՒՐՈՍ

մասնաճիղերուն

ՄՈՍԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Նուիրուած ԵՂԵՆԻ 109-ամեակին

Մասնակցութեամբ՝
Հ.Մ.Ս. Պեյրոպի
սկաուտական փողերախումբին

Տեղի կ'ունենայ Կիրակի, 21 Ապրիլ 2024-ին,
երեկոյան ժամը 5:30-ին,
Հ.Մ.Ս.-ՄԱՍԻՍ ակումբին առջեւ:

Հրատէր

Ընդունելութիւն եւ ծաղիկներու ղեկեղում 5:30-ին
Պաշտօնական յայտագիր 6:00-7:15

ՓՈՒՆԱԴԱՐՁ ՀԻԹԻՌԱՐՁԱԿՈՒՄ ...

(Շարունակուած Ա. Էջէն)

Երեսփոխաններ առաջարկած են Նաեւ քաղաքապետական ընտրութիւնները Նախ կազմակերպել ապահով գաւառներուն մէջ, ապա հասնիլ հարաւ եւ այն շրջանները, որոնք ենթակա են խորալեւան յարձակումներու: «Վերջնական որոշումը վերապահուած է Խորհրդարանի լիազուտար հիստիւն, որ Պրորիի հրաւերով տեղի պիտի ունենայ 25 Ապրիլին», յայտնեց Խորհրդարանի փոխնախագահը: Ան նշեց, որ դիւանը խօսած է Նաեւ քաղաքապետական անվտանգութեան շարքերէն պայմանագրով ծառայող կամուրներու թղթածրարին մասին:

ՀԱՐԱԻ ՀԱՐՅՈՎ ԱՌՃԱԿԱՏՈՄ

Խորհրդարանի Նախագահ Նեպիի Պրորի շեշտեց, թէ կարելի չէ քաղաքապետական ընտրութիւն կազմակերպել առանց հարաւի: «ժառանգա պետք է ըմբռնել, որ չեմ պատրաստուիր հարաւը ունշատել Լիբանանէն», ըսաւ Պրորի: Լիբանանեան ուժեր կուսակցութիւնը հակադարձեց Պրորիին եւ յայտարարութեամբ մը նշեց, որ Խորհրդարանի Նախագահը կը փորձէ փոշի ցանել լիբանանցիներու աչքին: «Հակառակ Հոկտեմբերէն ի վեր շարունակուող պատերազմին, Իսրայէլ 27 Փետրուարին կազմակերպեց քաղաքապետական ընտրութիւններ, բացառելով ռազմական գոտիներուն մերձակայ շրջանները միայն», նշուած է Լիբանանեան ուժերու յայտարարութեան մէջ: Իսկ Պրորիի օգնական Երեսփոխան Ալի Հասան Խալիլ հակադարձեց Լիբանանեան ուժեր կուսակցութեան յայտարարութեան ու դիտել տուաւ, թէ այդ կը բացայայտէ հարաւը Լիբանանէն անշատելու մասին ժառանգայի իսկական մտադրութիւնը: «Կը կարծեն, թէ հարաւի բռնագրաւումը տակաւին առկայ է, մոռնալով որ լիբանանեան այդ շրջանը ազատագրուեցաւ Նահատակներուն արիւնով», ըսաւ Ալի Հասան Խալիլ:

Լիբանանեան ուժեր կուսակցութիւնը այլ հաղորդագրութեամբ մը ստախօս համարեց Ազգային ազատ հոսանքի Նախագահ Երեսփոխան ժըպրան Պասիլը: Յիշեցնելով, որ անցնող տարիներուն հոսանքը ուժեղ ներկայութիւն ուներ կառավարութիւններուն եւ Խորհրդարանին մէջ, Նոյնիսկ հասած էր Հանրապետութեան Նախագահութեան, ժառանգա շեշտեց, թէ Պասիլի գլխավորած քաղաքական ուժը կը կրէ երկրին դժբախտութիւններուն պատասխանատուութիւնը՝ սկսեալ Սահմանադրութեան խախտումէն մինչեւ ելեմտական անկումը եւ սուրիացի տեղակալութեան ակաւոր մուտքը Լիբանան: «Պասիլի յաճախ կրկնած մեծագոյն սուղը կը վերաբերի տեղահանումներուն, որոնց հոսքը ուժեղագոյն էր դիմադրութեան ճակատի կառավարութեան օրերուն, ուր Պասիլ ուներ 11 Նախարար», յիշեցուց Լիբանանեան ուժերու յայտարարութիւնը:

ՌՈՒՄԵՐԸ ԱՐՅԱԽԵՆ ԴՈՒՐՍ

(Շարունակուած Ա. Էջէն)

Ներկայացուց Ատրպեյճանի հետ խաղաղութեան՝ ներառեալ սահմանազատումի իրողութիւններու իրավիճակը եւ պատասխանեց գիւղացիներու հարցումներուն: Հանդիպումին ներկաները նշեցին, թէ Փաշինեան տեղեկացուցած է Ատրպեյճանի հետ հողերու փոխանակումի մտադրութեան մասին: «Գետին այս կողմ պիտի կանգնին մեր գիւնուորները, իսկ միւս կողմը՝ հակառակորդը: Մեր եկեղեցիները հարիւր մեթր միւս կողմ պիտի մնայ մեզի եւ այնտեղ փշալար պիտի քաշուի», ըսաւ գիւղացիներէն մէկը: Փաշինեան յայտնած է Պաքուի հետ 90 տոկոս պայմանաւորութեան մասին, թէ երկու կողմերը կանգնած պիտի մնան Նոյն դիրքերուն վրայ: Վարչապետը գիւղացիներուն հետ տեսակցեցաւ Նաեւ մտակայ Բերքաբեր եւ Կիրանց գիւղերուն մէջ: «Ես գիտեմ թէ այս ինչու կ'ընեն: Ես կ'ընեմ այս, որ Հայաստանի Հանրապետութիւնը ըլլայ ազատ պետութիւն», համացանցի վրայ նշեց Փաշինեան՝ խօսելով սահմանային բանակցութիւններուն մասին, խոստովանելով հանդերձ, որ այս կրնայ ազդել իր քաղաքական ասպարեզին վրայ:

ԵՐԵՒԱՆ-ՌԻԱՏ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Հայաստանի արտաքին գործերու Նախարար Արարատ Սիրոյեան Ռիատի մէջ տեսակցեցաւ իր պաշտօնակից Ֆայսալ պըն Ֆարիանի հետ: Շեշտուեցաւ համագործակցութեան զարգացումը՝ զբօսաշրջութեան, կրթութեան, տնտեսութեան, արհեստագիտութեան, մշակութային արժեքներու պաշտպանութեան ոլորտներուն մէջ: Նախարարները կարեւորեցին ուղիղ թռիչքները՝ որպէս մարդոց միջեւ գործարար կապերը խթանելու միջոց:

ԻՍՐԱՅԵԼԻՆ ՃՆՇԵԼՈՒ ...

(Շարունակուած Ա. Էջէն)

Ելելու համար Ռուսիոյ եւ Իրանի սպառնալիքները: Նախագահ, Ուրբանիոյ զինուած ուժերու գերագոյն հրամանատարը ահագանգած էր, որ Ռուսիոյ դէմ արեւելեան ճակատին վիճակը վերջին օրերուն շատ վատթարացած է: Իսկ արտաքին գործերու Նախարարը յայտնեց, թէ «արեւմուտքը մեզի առանձին լքեց Ռուսիոյ դէմ»:

ՏՈՒՊԱՅԻ ՕՐԱԿԱՅԱՆԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԼԻԾ

Տուպայի մէջ անցնող երկու օրերուն չղաղրած անձրեւի տեղատարափի լոյսին տակ, օդակայանի տնօրէնութիւնը յայտարարեց, թէ ուշացած կամ չեղարկուած են բազմաթիւ թռիչքներ, մինչ շատ ուղեւորներ եւ աշխատակիցներ չեն կրցած հասնիլ օդակայան՝ ճամբաներու ողողումին պատճառով: MEA օդանավայանի ընկերութիւնը եւս անցնող երկու օրերուն չեղարկեց Տուպայ ուղղուող թռիչքները՝ օդային աննպաստ պայմաններու պատճառով:

Հովանարութեամբ՝

ՍՈՒՐԵԿ ՊԱՏԱՐԱԳ

Նուիրուած Հայոց Տեղասպանութեան 109-ամեակին

Յայտագիր՝
Մասնակցութեամբ Հ.Մ.Ս. Պեյրոպի Սկաուտական Խումբին
եւ փողերախումբին
Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2024-ին,
երեկոյան ժամը 4:00-ին, Նոր Հանր, Ս. Գեորգ եկեղեցու մօտ:

Հրատէր

Նոր Մտաւոր Մշակութային Մրցում

ԱՐԵԳ

ՊԱՐԱՆՈՒՄԻ ԵԼՈՅԹԵՐ

DANCE TROUPE

AREK

31 ՄԱՅԻՍ - 1 ՅՈՒՆԻՍ - 2 ՅՈՒՆԻՍ

BOGHOS OPTIC

Autoroute Jdeideh,
Tel.: 01-870016

ARARAD DAILY NEWSPAPER

MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أجنبية | المديرية المسؤولة: أني صرافيان (م.م.ش)
تصدر عن شركة مسييسر الملائمة والنشر (ش.م.م.)